



ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՏՆԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԻՆ ՄՅՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ ՀԵՏ*

Նմանություններ և ընդհանուր կետեր ենք գտնում հայոց պատարագի և արևելյան հին մյուս եկեղեցիների պատարագների միջև:

Այս փաստը պետք չէ զարմացնի, քանի որ այս պատարագներն ունեն նույն ծագումը՝ սկիզբ առնելով քաղկեդոնական ժողովից առաջ քրիստոնեական եկեղեցիների պատարագներից:

Ծիշտ է, որ Ե դարի դավանաբանական անհասկացողություններից հետո, որոնք ուժգնորեն ցնցեցին Արևելքը, այդ եկեղեցիների միասնության մեջ պատակտում առաջացավ նախ նեստորական (արևելյան ասորի) եկեղեցու բաժանմամբ, Եփեսոսի երրորդ տիեզերական ժողովից հետո (431 թ.) և ապա ոչ քաղկեդոնական (արևմտյան ասորի, դպտի, հաբեշ, հայ և մալաբար հակոբիկյան) եկեղեցիների բաժանումով, Քաղկեդոնի ժողովից հետո (451 թ.): Սակայն, այսուհանդերձ, բոլոր այդ եկեղեցիների մեջ քրիստոնեական պատարագը մնաց նույնը, միևնույն ալսօր, շատ թեթևորեն տարբերվելով իրարից, դավանաբանական անհասկացողությունների հետևանքով, որոնք

* Մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Ռումիհայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ և Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Զարեհ Ծ. վրդ. Պարոնյանի «Հայ եկեղեցու պատարագն արևելյան մյուս եկեղեցիների ծիսական արարողությունների համեմատությամբ» ումիներեն լեզվով գրված ուսումնասիրության Ե գլխի հայերեն թարգմանությունը՝ իր շահեկանության համար:

Սույն թարգմանությունը կատարել է Երևանի օտար լեզուների ինստիտուտի դասախոս Կայծակ Աթանասյանը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

պատճառ հանդիսացան արևելյան քրիստոնեության բաժանմանը: Ծիշտ է, որ ծամականի ընթացքում այս եկեղեցիների պատարագները մի կողմից կրել են արտաքին միջավայրից եկած ծիսական որոշ ազդեցություններ, իսկ մյուս կողմից՝ սեփական ջերմեռանդությունը նրանց մղեց նախնական դարերի պատարագի հարստացմանն առավել կամ նվազ չափով: Բայց, չնայած այս պատճառով առաջացած փոքր տարբերություններին, քրիստոնեական պատարագը մնաց ու մնում է քրիստոնեական բոլոր եկեղեցիների միջև միության ամենամուր հիմքը:

Այս տեսանկյունից էլ կատարելու ենք հայկական պատարագի և արևելյան հին մյուս եկեղեցիների պատարագների համեմատական ուսումնասիրությունը:

Կանգ պիտի առնենք, սակայն, միայն պատարագի հիմնական մասերի վրա՝ նշելով այս պատարագների միջև գոյություն ունեցող նմանությունները և ընդհանուր կետերը, ընդգծելով միաժամանակ հատկանշական տարբերությունները:

Հատկապես ակնառու է այն պարագան, որ արևելյան հին եկեղեցիները ծիսական տարվա ընթացքում օգտագործում են, մեծ կամ փոքր թվով, պատարագի անաֆորաներ** (anaphora): Այսպես, արևելյան աստ-

** Անաֆորա հունարեն բառ է, որը նշանակում է «վերաբերում», «վերադարձ», կամ պատարագի ընձանքի (հաց ու գինի) մատուցում: Միաժամանակ, քրիստոնեական պաշտամունքի մեջ անաֆորա նշանակում է նույն բառի կրկնությունը՝ հաջորդական նախադասությունների սկզբում ավելի ուշագրավ դարձնելու համար միտքը: Օրինակ, «վերաբերում»-ի

րական եկեղեցին (նեստորական) օգտագործում է պատարագի երեք տարբեր տեքստեր.

ա) «Աղոյայ և Մարիս առաքելների» պատարագի տեքստը, որը հանդիսանում է այս եկեղեցու հիմնական և պաշտոնական պատարագը.

բ) Թեոդորոս Մոպսուեստացու պատարագի տեքստը, որն օգտագործվում է Զատիկից հետո առաջին կիրակիից սկսյալ մինչև Հոգեգալուստ.

գ) Նեստորի պատարագի տեքստը, որն օգտագործվում է Նիկիական պահքի չորեքշաբթի օրը, Ավագ հինգշաբթի, ս. Հովհաննես Մկրտչի տոնի և հույն եկեղեցական հայրերի տոների օրը:

Արևմտյան ասորի եկեղեցին (հակոբիկյան), սուրբ Հակոբ Տյառնեղբոր ասորական պատարագից բացի, հավաքել ու պահպանել է ժառանգի ընթացքում ավելի քան 60 անափորաներ, որոնք օգտագործվում են ըստ ժամանակի և ըստ տոնի: Բայց դրանցից շատերը չեն օգտագործվում ներկայումս:

Մալաթիա-հակոբիկյան եկեղեցին, բացի սուրբ Հակոբի ասորական պատարագի անափորանից, օգտագործում է նաև արևմտյան ասորի հակոբիկյան եկեղեցու մեծ թվով անափորաներ:

Ղպտի եկեղեցին օգտագործում է ս. Կյուրեղի համանուն պատարագի անափորան, ս. Գրիգոր Աստվածաբանի պատարագի անափորան, որի տեքստն ուղղված է ոչ միայն Հայր Աստծուն, այլ նաև Քրիստոսին՝ Աստծու Որդվուն, և ս. Բարսեղ Կեսարացու պատարագի անափորան: Իսկ ավելի հին շրջանում օգտագործում էր 12 այլ պատարագի անափորաներ, որոնք այսօր չեն օգտագործվում:

Ի վերջո, հաբեշական եկեղեցին, որի պատարագի հիմնական տեքստը կրում է «12 առաքելների պատարագ» անունը, ծիսական տարվա ընթացքում օգտագործում է 14 այլ անափորաներ:

Հայ եկեղեցին թեև իր անցյալում օգտագործել է նույնպես պատարագի այլ անափորաներ, ինչպես՝ ս. Գրիգոր Նազիազանցու պատարագի, ս. Կյուրեղ Աղեքսանդրացու և ս. Սահակ Պարթևի պատարագների անափորաները և կամ Մեծն Բարսեղի պատարագի անափորան, դարեր շարունակ օգտագործել և մինչ այսօր էլ օգտագործում է պատարագի մեկ տեքստ, որը հին ձևա-

գրերում վերագրված է ս. Մեծն Աթանասին, բայց որի մեջ գտնվում են անցյալում հայերի կողմից օգտագործված տարբեր անափորաներով տեքստեր, որոնք, ըստ հայկական պատարագի ավանդության, մեզ հայտնի են ս. Գրիգոր Լուսավորչի պատարագի անափորանով ևս:

Արևելյան հին եկեղեցիների պատարագներից ոմանք ծնունդ են առնում ս. Հակոբ Տյառնեղբոր առաքելական հին պատարագից, իսկ մյուսները՝ ս. Մարկոսի առաքելական ծագում ունեցող պատարագից: Սկիզբ առնելով նույն մայր պատարագից (այսինքն ս. Հակոբ Տյառնեղբոր), ասորական խմբի պատարագները, ինչպես նաև հայկական պատարագը, ունեն նույնանման բազմաթիվ տարբեր բյուզանդական ծեսի պատարագների հետ, որոնց ազդեցությունները կրել են Քաղկեդոնի ժողովից հետո էլ: Այսպես, օրինակ, «Աղոյայ և Մարիս առաքելների» պատարագի մեջ բացահայտորեն հանդիպում ենք բյուզանդական ծագում ունեցող անժխտելի մի շարք տարբերի: Թեոդորոս Մոպսուեստացու պատարագի անափորան թարգմանվել է հունարենից 2 դարում և հարմարեցվել ասորական պատարագին, իսկ Նեստորի պատարագի անափորան բացահայտում է իր մոտիկությունը Հովհաննես Ոսկեբերանի պատարագի բյուզանդական անափորանի հետ:

Այժմյան ասորա-հակոբիկյան պատարագը ոչ այլ ինչ է, քան ս. Հակոբ Տյառնեղբոր պատարագի ասորական հին տարբերակը. մալաթա-հակոբիկյան պատարագը նույնպես պահպանել է ս. Հակոբի հունական պատարագից ծագում առած որոշ տարբեր հունարեն այն խոսքերում, որոնք պահպանվել և արտասանվում են մինչև այսօր պատարագի տեքստում:

Ղպտական պատարագը, որը ներկայումս կրում է ս. Կյուրեղ Աղեքսանդրացու անունը և որը պարզապես թարգմանությունն է և կամ բարեփոխված մեկ ձևը ս. Մարկոս Ավետարանի հունական պատարագի, ս. Գրիգոր Աստվածաբանի և Մեծն Բարսեղի պատարագների անափորաներով, բացահայտում է մի կողմից բյուզանդական պատարագների, իսկ մյուս կողմից՝ ասորական պատարագների ազդեցությունը. այս պատարագում ևս մինչև օրս պահպանվում են հունարեն բազմաթիվ բառեր և արտահայտություններ, ավելի, քան ասորա-հակոբիկյան պատարագի մեջ, որպես ապացույց հունական աղբյուրի, որից և թարգմանվել է:

Նույնը կարելի է ասել և հաբեշական պատարագի մասին, որը կոչվում է «12 առաքելների պատարագ» և որը մեծ մա-

ժամանակ արտասանված «Համբարձեք, իշխանք»-ը, կամ «Զորումս, զորումս», «Ահի կացցուք» և այլն, անափորաներ են:



սամբ հանդիսանում է դպտական պատարագի ավելի ընդլայնված թարգմանությունը:

Ա. Կանոն սպաս դնելոյ

Սա նախապատրաստական մի կանոն է, համապատասխան բյուզանդական և հայ ծեսերի «սպաս դնելոյ» կանոնին, որը հանդիպում է արևելյան հին եկեղեցիների բոլոր պատարագների մեջ: Որոշ պատարագներում, ինչպես, ասենք, արևելյան ասորական (նեստորական) կամ հաբեշական պատարագների մեջ, հիշյալ նախապատրաստական կանոնը շատ ավելի ծավալուն է, քան հայկական ծեսի մեջ, մինչ մյուսների, այսինքն ասորա-հակոբիկյանների ու ղըպտիների մոտ շատ ավելի պարզ է:

1. — Պատարագի զգեստավորման կանոնը շատ ավելի պարզ է արևելյան պատարագների մեջ, քան հայկական ծեսում. իսկ հաբեշների մոտ քահանայի զգեստավորումը տեղի է ունենում սուրբ Խորհրդի պատրաստությանը համընթաց:

2. — Ինչ վերաբերում է նշխարի ու գինու պատրաստության կանոնին, ապա արևելյան հին եկեղեցիները, քացի հայ եկեղեցուց, ինչպես նաև բյուզանդականը, օգտագործում են խմորյալ հաց: Պատարագի նշխարն արևելյան հին եկեղեցիներում, ինչպես և հայ եկեղեցում, պատրաստում են ս. Սեդանին ծառայող հոգևորականները (նեստորականների մոտ հացը պատրաստվում է ցորենի ալյուրից՝ ձիթայուղով և տաք ջրով, որին որպես թթվամոր ավելացվում է նախորդ օրվա խմորից մի փոքր մասնիկ, որը և կոչվում է «Մալքա»: Նույն ձևով պատրաստված նշխարի խմորից օգտվում է նաև ասորի-հակոբիկյան եկեղեցին):

Պատարագի հացն ունի կլոր նշխարի ձև, որի վրա կնքված է մի խաչ՝ տարբեր ձևերով (Դպտիների մոտ նշխարի վրա կնքված են նաև հունարեն «Ագիոս օ Թեոս, ագիոս Իսքիրոս, ագիոս Աթանասոս» բառերը (Սուրբ Աստուած, սուրբ և հօգօր, սուրբ և անմահ):

Սուրբ Խորհրդի րնծաների երկրորդ տեսակն անապակ գինին է, որը հաբեշական եկեղեցում պատրաստում է սարկավագ՝ մի քանի չամիչի հատիկներ թրջելով ջրի մեջ: Հացի հայ եկեղեցուց, որ օգտագործում է անապակ գինի, արևելյան մյուս բոլոր հին եկեղեցիներն օգտագործում են ջրախառն գինի, ինչպես բյուզանդական ծեսում ևս:

3. — Արևելյան հին եկեղեցիներում պատարագի ժամանակ օգտագործված սրբազան սպասները հետևյալներն են. մաղրզմայն և սկիհը: Բյուզանդական ծեսին յուրահատուկ փոքրիկ աստղիկը (Asteris) և

գեղարդը (Copia) չեն օգտագործվում ո՛չ հայ և ո՛չ էլ արևելյան մյուս ծեսերում: Ինչ վերաբերում է փոքրիկ գրպին, ապա այն օգտագործում է միայն ասորա-հակոբիկյան եկեղեցին (այն էլ միայն հոգևոր դասի հաղորդության ժամանակ, ինչպես նաև դպտի ու հաբեշների եկեղեցիներում հավատացյալների՝ միայն Տիրոջ արյամբ հաղորդելու ժամանակ):

Ինչպես բյուզանդական ծեսում, այնպես էլ ասորիներն ու դպտիները սրբազան սպասների համար օգտագործում են երեք ծածկոցներ, մինչդեռ նեստորականները, ինչպես նաև հայերն օգտագործում են միայն մեկ ծածկոց:

4. — Սուրբ Խորհրդի պատրաստության բուն գործողությունը՝ «սպաս դնելոյ» հիմնական պահը՝ «Առեալ քահանայն զնշխարն և դիցէ ի մաղզմայն ասելով... Եւ հեղցէ զգինին խաչանիչ ի սկիհն ասելով...», ինչպես նաև հաջորդող աղոթքները, որով Խորհուրդը սրբացվում է, ասորա-նեստորական և ասորա-հակոբիկյան եկեղեցիներում շատ պարզ է և նման հայկական ծեսին: Դպտական եկեղեցում քահանան ծածկված նշխարը քարծրացնում է մինչև իր գլխին հավասար: Սարկավագը նույնն է անում սկիհի հետ՝ պտույտ գործելով սուրբ Սեդանի շուրջ. քահանան ու սարկավագը հետո գալիս են խորհրդարան, որտեղ նշխարը դնում են մաղզմայի վրա, ապա սկիհում լցնում գինի և ջուր: Պատարագիչը օրհնում է մի քանի անգամ ս. Խորհուրդը, մինչ սարկավագն արտասանում է 117-րդ սաղմոսը: «Սպաս դնելոյ» կանոնն ավարտվում է քավության մի աղոթքով՝ հոգևոր դասի ու հավատացյալների համար:

Հաբեշական եկեղեցում «սպաս դնելոյ» կանոնն ավելի է ծավալուն՝ ի տարբերություն բոլոր հին մյուս արևելյան եկեղեցիների: Այս կանոնի կատարման իր գործուն մասնակցությունն է բերում եկեղեցում ներկա քրիստոնյա ողջ համայնքը՝ իր պատասխան խոսքերով: Պատարագիչն աղոթում է եկեղեցու, տապանակի (tabot), սուրբ սպասների համար, որոնց վրա խնդրում է սուրբ Հոգու իջնելը, ինչպես նաև աղոթում անձնապես իրեն համար. պատարագիչը հայցում է սուրբ Հոգու իջնելը նաև սրբաւոնիկ և վերջապես, սուրբ հաղորդություն առնող հավատացյալների համար: Պատարագիչ քահանան, նշխարը մաղզմայի վրա դնելուց և սկիհի մեջ ջրախառն գինի լցնելուց հետո, արտասանում է մի նոր աղոթք՝ դրանց վրա: Այնուհետև հավատացյալների հաղորդմանը ծառայող գալի վրա էլ մի աղոթք է ասում, խնդրում իր հետ ս. Խորհրդի մյուս սպասարկողներին և ժողովը:

դին՝ աղոթելու պատարագին ընծա բերված հացի ու գինու համար: Ապա, դառնալով դեպի արևելք, բարձրացնում է իր ձեռքերը՝ ասելով բարձր ձայնով.

«Միայն սուրբ Հայր, միայն սուրբ Որդի, միայն սուրբ Հոգին», որին և հավատացյալները պատասխանում են. «Ճշմարտապէս սուրբ Հայր, ճշմարտապէս սուրբ Որդին, ճշմարտապէս սուրբ Հոգին»: Եվ, ի վերջո, քահանան ու սարկավագն ասում են փոխն ի փոխ 117-րդ սաղմոսը: Սաղմոսին հաջորդող «Տէր Աստուած մեր, որ գերկնաւոր հացդ...» աղոթքը նույնն է դպտական ու հաբեշական, ինչպես նաև հայկական ու բյուզանդական ծեսերում:

Բ. Երախայից պատարագը

1. —Արևելյան հին եկեղեցիներում «Երախայից պատարագ»-ի սկիզբը տարբեր է: Այս եկեղեցիներից և ոչ մեկում «Երախայից պատարագ»-ը չի սկսվում «Օրհնեալ թագաւորութիւնն...» աղոթքով, ինչպես է հայ և բյուզանդական ծեսերում: Արևելյան ասորիների (նեստորական) մոտ «սպաս դնելու» կանոնից անցումը դեպի «Երախայից պատարագ»-ը կատարվում է «Հայր մեր»-ի և մի քանի այլ աղոթքների արտասանությամբ. իսկ բուն «Երախայից պատարագ»-ը սկսվում է «Սուրբ Աստուած» երգով, որից հետո շարունակվում են ավետարանական ընթերցումները:

Ասորա-հակոբիկականների մոտ «Երախայից պատարագ»-ը սկսվում է ս. Ավետարանի «Վերաբերում»-ով, որի ընթացքում պատարագին իր ձեռքերում վերցնում է Ավետարանը և, իր հետ ունենալով սեղանի մյուս սպասարկողները, գալիս դեպի մեծ գրակալը, որտեղից կատարվում են ընթերցումները:

Դպտիկների մոտ «Երախայից պատարագ»-ը սկսվում է խնկարկությամբ, որի ընթացքում արտասանվում է խնդրողական մի աղոթք, որին և հաջորդում են ընթերցումները: Այլ բառերով, այս բոլոր ծեսերում, ինչպես և հին եկեղեցում, պատարագը սկսվում է պատարագչի մուտքով և ավետարանական ընթերցումներով, որոնք համապատասխանում են այժմյան բյուզանդական պատարագի ծեսի փոքր «Վերաբերում»-ին: Վերոհիշյալ պատարագներն ավելի հարազատորեն են պահպանել հին եկեղեցու պատարագի պարզությունը (նախքան Ե դար), ի տարբերություն ուղղափառ և հայկական ծեսերի, առանց կրելու բյուզանդական պատարագի առաջին մասի զարգացումը (ներածություն), որի մեջ մտել է մի տարբեր արարողության սկիզբը:

Եվ, վերջապես, հաբեշների մոտ «Երախայից պատարագ»-ի սկիզբը շատ ավելի ծավալուն է: Այստեղ կատարվում են մի շարք աղոթքներ, որոնք ուղղված են ի դեմս սուրբ Երրորդության: Այս աղոթքները սկսվում են սարկավագի խոսքերով «Օրթի — Ոտքի ելէք, վասն աղոթքի», մինչ ժողովուրդը պատասխանում է՝ «Տէր ողորմեա», իսկ քահանան՝ «Խաղաղութիւն ամենեցուն»: Ապա հավատացյալները պատասխանում են. «Եւ ընդ Հոգւոյդ քում»: Սրան հաջորդում է քահանայի ոգեկոչման աղոթքը, ինչ որ նույնն է դպտական ծեսի աղոթքին, աղոթք՝ «Վասն քառութեան իրոյ», «Վասն հոգևոր դասի ու ժողովրդեան»: Սարկավագն արտասանում է մի երկար քարոզ, որ նման է հայկական ծեսում՝ «Սուրբ Աստուած» երգից հետո ասված «Վասն խաղաղութեան» քարոզին: Ապա սկսվում է խնկարկությունը, մի քանի աղոթքներով, որոնց մասնակցում է նաև ժողովուրդը՝ իր պատասխաններով: Խնկարկությունը վերջանում է քահանայի օրհնությամբ, որ, իր ձեռքերը դնելով սարկավագների գլխին, դառնում է դեպի ժողովուրդը և ասում. «Խաղաղութիւն ամենեցուն»:

2. —Ինչ վերաբերում է «Սուրբ Աստուած» երգի երգեցողությանը, արևելյան ասորիների (նեստորական), ինչպես և ասորա-հակոբիկյան ատարագում, այն կատարվում է մինչ ավետարանական ընթերցումները, ինչպես և հայկական ծեսում, իսկ դպտիկների ու հաբեշների մոտ այն տեղադրված է առաքելական թղթերի ու սուրբ Ավետարանի ընթերցումների միջև:

Հայկական ծեսում «Սուրբ Աստուած»-ը երգվում է «Ի դեմս սուրբ Երրորդութեան երկրորդ Անձին»՝ շեշտելով Հիսուսի Անձնավորությունը, իսկ ասորա-հակոբիկյանների մոտ ավելի է շեշտվում հետևյալ գաղափարը, Հիսուսի մասին. «Որ խաչեցար մասն մեր հաճապագ»: Դպտիկների ու հաբեշների մոտ այս երգը շատ ծավալուն է: Այն հատկությամբ ցույց է տալիս, որ երգն ուղղված է Աստուծո Որդվույն՝ «Որ ծնար ի սուրբ Կուռէն», «Որ խաչեցար վասն մեր», «Որ յարեար ի մեռելոց և համբարձար յերկինս»:

3. —Հին և Նոր Կտակարանների ընթերցումները մեծ կարևորությամբ պահպանվել են արևելյան հին բոլոր եկեղեցիների պատարագների մեջ, ինչպես առաջին դարերի ընթացքում:

Արևելյան ասորիների (նեստորական) ծեսում կատարվում են չորս ընթերցումներ. Հին կտակարանից՝ Հնգամատյան, Ծմնոց, մարգարեներ, հատկապես Եսայի մարգար-

րե. Նոր Կտակարանից՝ «Գործք առաքելոց», առաքելական թղթեր, ինչպես և Ավետարան: Ասորա-հակոբիկյանների ծեսում օգտագործվում են երեք ընթերցումներ Հին Կտակարանից (Օրենք, Սողոմոնի առակներ և մարգարեական գրքեր), ինչպես նաև երեք ընթերցումներ Նոր Կտակարանից («Գործք առաքելոց», առաքելական թղթեր և Ավետարան):

Հպոիներն ու հաքեշները կատարում են չորս ընթերցումներ միայն Նոր Կտակարանից (Պողոսի թղթեր, Կաթողիկե թղթեր, «Գործք առաքելոց» և Ավետարան):

Այնուհետ, որտեղ Ավետարանն անհասկանալի է դարձած հին լեզվով ընթերցանության հետևանքով, այն թարգմանվում է արդի խոսակցական լեզվով և բացատրություն տրվում ժողովրդին հասկանալի կերպով:

4. —«Երախայից պատարագ»-ի վերջավորությունն արևելյան հին եկեղեցիների պատարագներում որոշ տարբերություններ է ներկայացնում, ավելի կամ պակաս չափով, հայկական ծեսի համեմատությամբ հիշյալ այս պատարագներում: Ավետարանի ընթերցմանը հաջորդում են սարկավագի մի շարք քարոզներ և քահանայի մի քանի աղոթքներ, որոնք ոչ մի ձևով չեն հիշեցնում «Երախայից» (չմկրտվածների) նախկինում եկեղեցուց դուրս գալը կամ հեռացումը և այդ կարող է համարվել հավատացյալների պատարագի սկզբնավորությունը: Միայն նեստորական և հաքեշական ծեսերում կարելի է նկատել եկեղեցուց երթնանի հեռացումը «Երախաների և թերահավատների»:

Գ. Հաւատացելոց պատարագը

«Հաւատացելոց պատարագ»-ը սկսվում է հայկական, հաքեշական ու արևելյան ասորի (նեստորական), բյուզանդական ծեսերում սարկավագի «Մի ոք յերախայից...» կոչով: Իսկ արևելյան բոլոր պատարագներում այն նշվում է պատարագի որոշ նախապատրաստությամբ:

1. —Սուրբ Խորհրդի հանդիսավոր «Վերաբերում»-ը դեպի սուրբ Սեղան, այնպես, ինչպես տեղի է ունենում հայկական և բյուզանդական ծեսերում, չի հանդիպում արևելյան մյուս եկեղեցիների որևէ ծեսում: Նրանք չունեն ո'չ «Վերաբերում» և ո'չ էլ սրբասացության երգեցողություն: Հիշյալ ծեսերում սուրբ Խորհուրդը քերվում է խորհրդարանից դեպի սուրբ Սեղան, առանց թափոթի, միայն քահանայի ու սարկավագի կողմից, հավարտ սուրբ Ավետարանի ընթերցման կատարված մի աղոթքով: Պա-

տարագի քահանայի ձեռքերի լվացումը գրեթե մույն ժամանակ տեղի է ունենում թե՛ ասորա-հակոբիկյան ու հաքեշական և թե՛ հայկական ծեսերում:

2. —«Վերաբերում»-ից հետո մի կարևոր պահ է «Հաւատոյ հանգանակ»-ի կամ «Հաւատամք»-ի արտասանությունը: Հայկական ծեսում «Հաւատոյ հանգանակ»-ն արտասանվում է Ավետարանի ընթերցումից անմիջապես հետո, այսինքն հավատացյալների պատարագի սկզբնավորությանը: Հայկական ծեսը միակն է արևելյան ծեսերի մեջ, որ «Հաւատոյ հանգանակ»-ը տեղադրել է պատարագի սկզբնավորության մեջ: Արևելյան մյուս ծեսերը, ներառյալ և բյուզանդականները, «Հաւատոյ հանգանակ»-ը տեղադրում են ավելի ուշ, պատարագի «Ջորումն, գորումն...» անաֆորայից անմիջապես առաջ: Արևելյան հին եկեղեցիների բոլոր ծեսերում «Հաւատոյ հանգանակ»-ի բովանդակությունը մույնն է, ինչ որ հայ եկեղեցուց, այսինքն Նիկիո-Կոստանդնուպոլսականը, տեղական որոշ հավելադրումներով: Նշենք նաև, որ բոլոր ծեսերում, ինչպես և հայկականում, «Հանգանակ»-ի սկիզբն արտահայտված է «Հաւատամք» բառով (հոգևակի առաջին դեմք և ոչ թե եզակի՝ ինչպես բյուզանդական ծեսում)՝ Է՛լ ավելի ի հայտ բերելով քրիստոնեական պատարագի ընդհանրական բնույթը:

3. —Հայկական ծեսում «Ողջոյն»-ի համբույրը տեղի է ունենում «Ընորհօք և մարդասիրութեամբ...» աղոթքից հետո, քահանայի «Խաղաղութիւն ամենեցուն»-ով և սարկավագի «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան» խոսքերով: Իսկ արևելյան մյուս հին ծեսերում «Ողջոյն»-ը տրվում է «Հաւատամք»-ից հետո, որին նախորդում են մի շարք աղոթքներ, որոնց բովանդակությունը տարբերվում է մեկ եկեղեցուց մյուսը. օրինակ՝ արևելյան ասորիները (նեստորական) ասում են բարեխոսության մի աղոթք, Հին և Նոր Կտակարանների սրբերի, ինչպես նաև եկեղեցու հայրերի ու վարդապետների համար, ինչպիսիք են Իգնատիոսը, Պողիկարպոսը, Աթանասը, Բարսեղը, Գրիգոր Նազիազանցին, Գրիգոր Նյուսացին, Ամբրոսիոսը, Դիոդորոս Տարսեցին, Թեոդորոս Պոպուսեանցին և Նեստորը:

Ասորա-հակոբիկյան ծեսում ասվում է մի աղոթք՝ «Ի դէմս ս. Երրորդութեան»: Ղրպտական ու հաքեշական ծեսերում, նախքան «Ողջոյն»-ը, ասվում է մույնպես մի աղոթք՝ սրտերի մաքրության համար ատելությունից, նախանձից ու անարդարությունից, որպեսզի հավատացյալ ժողովրդից ստեղծ-

վի սիրով լեցուն, կատարյալ մի ամբողջություն:

Արևելյան ասորիների (նեստորական) և ասորա-հակոբիկյանների մոտ «Ողջուն»-ը փոխանցվում է, ինչպես և հայկական ծեսում, պատարագի կողմից սարկավագի միջոցով հավատացյալների երիցագույնին, որն իր հերթին այն փոխանցում է հավատացյալներին:

4. —Արևելյան հին եկեղեցիների պատարագների անաֆորան ևս ներկայացնում է որոշ նմանություններ, ընդհանուր կետեր հայկական պատարագի հետ, բայց և շատ տարբերություններ: Քանի որ արևելյան պատարագներում ծիսական տարվա ընթացքում օգտագործում են ավելի քիչ և կամ ավելի շատ թվով պատարագի անաֆորաներ, այդ բոլորի վրա կանգ չենք առնելու, քանի որ որպես հիմք կընդունենք համապատասխան եկեղեցու ամենատարածված անաֆորան, և մեր դիտողությունները խմբավորելու ենք ըստ պատարագի այս մասի ամենակարևոր պահերի: Այսպես, օրինակ, արևելյան ասորիների (նեստորական) համար հետևելու ենք «Աղոյալ և Մարիս առաքելների» պատարագի անաֆորային: Ասորա-հակոբիկյանների համար հետևելու ենք «Սուրբ Հակոբ Տյառնեղոթ» պատարագի անաֆորային: Ղպտիների համար հետևելու ենք «Սուրբ Մարկոսի» պատարագի անաֆորային այնպես, ինչպես այն հարմարեցված է ս. Կյուրեղ Աղեքսանդրացու կողմից, և հաքեշների համար հետևելու ենք «Սուրբ Առաքելոց» պատարագի անաֆորային, ինչպես որ այն հարմարեցված է ս. Բարսեղ Անտիոքացու կողմից:

ա) Պատարագի անաֆորայի նախաբանը, որը հայկական պատարագում սկսվում է «Ահի կացցուք, երկիտի կացցուք» քարոզով և շարունակվում է մինչև «Սուրբ, Սուրբ»-ը, մեր ուսումնասիրած արևելյան պատարագներից տարբեր զարգացում ունի:

Հայկական ծեսի ամենամոտ ձևին հանդիպում ենք արևելյան ասորիների (նեստորական) և ասորա-հակոբիկյան պատարագներում: Ղպտիների ու հաքեշների մոտ պատարագի նախաբանն ամբողջացվում է մի շարք գոհաբանական աղոթքներով, որոնք ընդհատվում են «Սուրբ, Սուրբ»-ով:

բ) Սուրբ հաղորդության խորհրդի հաստատման խոսքերը՝ «Առեք կերեք ... Արքեք ի սմանէ...», բացարձակապես բացակայում են արևելյան ասորիների (նեստորական) եկեղեցու «Աղոյալ և Մարիս առաքելների» պատարագից, որտեղ «Սուրբ, Սուրբ»-ից հետո պատարագիչն ասում է մի աղոթք, «Վասն խաղաղության աշխարհի», որից հետո սարկավագը բարձր ձայնով ար-

տասանում է. «Ահի կացցուք, երկիտի կացցուք, ուղիղ կանգնեալ, աղօթեցէք» քարոզը: Այս պահին պատարագիչն ասում է սուրբ Հոգու էջքի աղոթքը (Epiclèse)*, որպեսզի Նա, «իջնելով սուրբ Խորհրդի ու նրա ծառայողների զոհաբերության վրա, այն օրհնի ու արբացնի», և դրա շնորհիվ միջնորդություն կատարվի «Վասն քառյօթեան և թողութեան մեղաց», և որ Նա գորացնի հույսը մեռելների հարության մասին և հավատքը մի նոր կյանքի՝ երկնքի արքայության մեջ: Արևելյան ասորական (նեստորական) եկեղեցու պատարագների մյուս երկու տեքստերում, սակայն, հանդիպում ենք Թեոդորոս Մոպսեստացու ու Նեստորի պատարագի անաֆորաներում, ինչպես ս. հաղորդության խորհրդի հաստատման խոսքերին, այնպես էլ ս. պատարագի ընծաների (հացի ու գինու)՝ Քրիստոսի մարմնին և արյան փոխակերպման գաղափարին, ս. Հոգու առաքման աղոթքի՝ Epiclèse-ի միջոցով:

Ասորա-հակոբիկյան պատարագում ս. հաղորդության հաստատման խոսքերը՝ «Առեք կերեք»-ը, ինչպես և սուրբ պատարագի կատարումը հրահանգող պատվիրակը՝ Anamnèse**, նույն կարգն են պահպանում, ինչ որ հայ և բյուզանդական ծեսերում: Միակ տարբերությունը կայանում է նրանում, որ Epiclèse-ի ժամանակ պատարագիչ քահանան ձեռքերը շարժում է պատարագի ընծաների վրա՝ խորհրդանշելով սուրբ Հոգու էջքը: Ղպտիների պատարագում «Սուրբ, Սուրբ»-ին հաջորդում է Epiclèse-ի մի կարճ աղոթք, որից հետո պատարագիչը ոչ միայն վերջին ընթերցում Տիրոջ խոսքերն է արտասանում, այլև կրկնում միաժամանակ այդ առթիվ Տիրոջ կատարած շարժումները: Իսկ ժողովուրդը նույն պահին ծնրադիր պատասխանում է՝ «Ամէն» և խոստովանանքի մի այլ կարճ խոսքերով արտահայտում իր հավատքը ս. հաղորդության խորհրդի հաստատման խոսքերի ճշմարտության նկատմամբ: Ապա հաջորդում է պատարագի Anamnèse-ն, որ համապատասխանում է «Եւ զայն միշտ իր յիշատակ առնել...» աղոթքին: «Եւ զքոյս ի քոյոց...» աղոթքից հետո էլ պատարագիչը հայցում է ս. Հոգու էջքը՝ Epiclèse և պա-

* Epiclèse-ն հունարեն բառ է, որը նշանակում է ս. Հոգու ոգեկոչման աղոթք. «Երկիր պազանեք և աղաչե՛ք և խնդրե՛ք ի քե՛ն Աստուած, առաքեալ ի մեզ զսուրբ Հոգին»:

** Anamnèse-ն հունարեն բառ է, որը նշանակում է ս. պատարագի կատարումը պատվիրող աղոթք. «Եւ զայն միշտ իր յիշատակ առնել պատուիրան առանդեաց մեզ»:

տարագի ընծաների՝ հացի և գինու փոխակերպումը Տիրոջ Մարմնին և Արյանը։ Այս ձևով Փրկչի խոսքերն ու դրանց ընկերակցող շարժումները Epiclese-ի տեքստը երկուսի են բաժանում՝ թողնելով այն տպավորությունը, որ այս պատարագում գոյություն ունեն կրկնակի Epiclese: Հաբեշական պատարագում ս. հաղորդության խորհրդի հաստատման խոսքերը՝ պատարագի Anamnèse-ն ու Epiclese-ն, նույն հաջորդականությունն ունեն, ինչ որ դպտական պատարագում, այն միակ տարբերությամբ, որ նրանք շատ ավելի կարճ են արտասանվում։

Մի առանձնահատուկ հատկանիշ նկատելի է հաբեշների մոտ, որ Epiclese-ին հաջորդում է ս. Հոգու էջքի մի կարճ այլ աղոթք, հավատացյալների համար՝ նրանց գորացնելու, լիցքավորելու և միացնելու հոգեվոր մի ամբողջության մեջ։

5. —Ասորա-հակոբիկյան պատարագում Բարեխոսության աղոթքների տեղը նույնն է, ինչ որ հայկական և բյուզանդական ծեսերում, այսինքն անափորայի վերջում, Epiclese-ից հետո։ Արևելյան ասորիների (նեստորական) և մարոնիտների պատարագներում բարեխոսության այս աղոթքները կրում են «Գիրք ողբերի և մեղեկների» անունը, և դրանք տեղադրված են «Ողջուն»-ից առաջ։ Հայտիների ծեսում բարեխոսության այդ աղոթքներն արտասանվում են հաղորդության անափորայի ընթացքում, «Սուրբ, Սուրբ»-ից առաջ, և ավելի երկար են։ Իսկ հաբեշների պատարագում (առաքյալների անափորա) այդ աղոթքները նույն տեղն ունեն, ինչ որ դպտիների մոտ, սակայն դրանք շատ ավելի կարճ են։

6. —Ի տարբերություն հայկական ծեսի, արևելյան մյուս բոլոր հին եկեղեցիների պատարագներում «Հայր մեր»-ն ասվում է այն ժամանակ, երբ պատարագիչ քահանան երկու մասի է բեկանում սուրբ նշխարը։

7. —Ի դեպ, բոլոր այս պատարագներում, ի տարբերություն հայկական ծեսի, նշխարի բեկանումը կատարվում է «Ի սրբություն սրբոց»-ից առաջ։

Այսպես, արևելյան ասորիների (նեստորական) պատարագում հաղորդության անափորային հաջորդում է պատարագիչ քահանայի կողմից արտասանված «Վասն խաղաղության» աղոթքը։ Այնուհետև պատարագիչը երկու մասի է բեկանում սուրբ նշխարը, որի մի մասը «արկցե՛ ի բաժակն»՝ դրանով օրհնելով սկիհը, «ի դեմս սուրբ Երրորդության» մի աղոթք արտասանելով։ Այնուհետև նշխարի մյուս մասն օրհնում է սկիհով, ապա ս. նշխարի երկու մասն էլ միացնում՝ դնելով այն մաղզմայի վրա։ Այս

պահին ամբողջ ժողովուրդը բարձրաձայն արտասանում է «Հայր մեր»-ը, իսկ պատարագիչը՝ ի ծածուկ նույն աղոթքը։ Այնուհետև պատարագիչը բարձրաձայն ասում է. «Սրբությունը պատկանում է սրբերին ամբողջապես», որին ժողովուրդը պատասխանում է. «Միայն Հայր սուրբ, միայն Որդի սուրբ, միայն Հոգի սուրբ։ Պատիվ Հոր և Որդվուն և սուրբ Հոգուն»։

Ասորա-հակոբիկյան պատարագում անափորային հաջորդում է մի երկար քարոզ՝ պատարագիչի կողմից ծածուկ ասված աղոթքներով, որոնց ընթացքում պատարագիչը բեկանում է սուրբ նշխարը, որպես Հիսուսի խաչելության, սուրբ գեղարդով խոցման և մեղեկներից Նրա հարության խորհրդանշան։ Ժողովուրդը քարձր ձայնով արտասանում է «Հայր մեր»-ը։ Պատարագիչը խաղաղություն է տալիս հավատացյալներին, մի փոքր աղոթք կարդում, նորից խաղաղություն տալիս և ապա ասում. «Ի սրբություն Սրբոց», բարձրացնելով մաղրզմայն և սկիհը։ Հետո քարձր ձայնով ասում է. «Միայն սուրբ Հայր եղիցի ընդ մեզ։ Միայն սուրբ Որդին եղիցի ընդ մեզ։ Միայն սուրբ Հոգին եղիցի ընդ մեզ։ Օրհնեալ է անուն Տեառն յերկինս և յերկրի հանապազ»։ Իսկ ժողովուրդը պատասխանում է՝ «Ամեն»։

Հայտիների պատարագում, հաղորդության անափորային հաջորդող մի շարք գոհաբանական աղոթքներից հետո, պատարագիչը ձախ ձեռքի մատներով վերցնում է սուրբ նշխարը և ապա, աջ ձեռքի ցուցամատը դնելով դրա վրա, ասում. «Մարմին սուրբ», որին ժողովուրդը պատասխանում է. «Պաշտենք զսուրբ Մարմնիդ քո»։ Հետո, նույն ցուցամատը դնելով սկիհի մեջ, ասում է. «Եւ անգին Արին»։ Ժողովուրդը պատասխանում է. «Եւ անգին զԱրինն քո»։ Ապա պատարագիչը նույն ցուցամատով թրջում է նշխարը՝ «արկցե՛ ի բաժակն» և ասում. «Քրիստոսի են. եղիցի միատեղ Ամենահօր Տերն, Աստուած մեր»։ Ապա, մինչ ժողովուրդը «Հայր մեր» է ասում, պատարագիչն ի ծածուկ կարդում է մի այլ աղոթք, որից հետո ասում է երկրպագության մի աղոթք, մի ուրիշ աղոթք էլ՝ քավության, հավատացյալներին հաղորդության պատրաստվելու նպատակով։ Այնուհետև պատարագիչը բարձրացնում է սուրբ նշխարը գլխից վեր և ասում. «Ի Սրբություն Սրբոց», որին ժողովուրդը պատասխանում է. «Միայն Հայր սուրբ, միայն Որդին սուրբ, միայն Հոգին սուրբ»։ Ապա պատարագիչը, իր ձեռքերի մեջ պահելով սուրբ նշխարի մի մասը, արտասանում է հաղորդության և քրիստոսաբանական հավատի խոստովանության մի աղոթք, իսկ տարկալագն ա-

սում է. «Ամեն, ամեն, ամեն: հաաաաա, հաաաաա, հաաաաա, թե այս է ճշմարիտն»:

Հաբեշների պատարագում հաղորդության անաֆորայից և ս. Հոգու՝ հավատացյալների վրա էջքի աղոթքից հետո, որի ընթացքում ժողովուրդը արտասանում է «Հայր մեր»-ը, պատարագիչը երկրպագության, ինչպես և մեղքերի քավության մի աղոթք է կարդում, որից հետո սարկավագն ասում է՝ «Պոսխուսե» (ուշադրություն դարձրեք), իսկ քահանան՝ «Ի Սրբության Սրբոց»: Այժմ տեղի է ունենում սուրբ ճշխարի քեկանումը: Պատարագիչը ճշխարի կենտրոնական մի մասը թրջում է քաժակի մեջ և ապա նույն մասով խաչակնքում մնացյալ մասերի վրա և հետո կարդում մի հանդիսավոր աղոթք՝ նման դպտական պատարագի հաղորդության և քրիստոսաբանական աղոթքին:

8. —Սուրբ սեղանի ծառայողների հաղորդությունն արևելյան բոլոր հին պատարագներում, ինչպես և հայկական ու բյուզանդական ծեսերում, տեղի է ունենում նախքան հավատացյալների հաղորդվելը: Հաղորդությունը տեղի է ունենում գոհաբանական ջերմեռանդ աղոթքներով՝ նման հայկական ծեսի աղոթքներին: Հավատացյալների հաղորդության կերպը տարբերվում է, սակայն, հայկական ծեսի հաղորդության կերպից: Այսպես, արևելյան ասորիների (նեստորական) պատարագում Տիրոջ Մարմինն ու Արյունը բաշխվում է հաղորդվողին՝ առանձին-առանձին, ինչպես այն կատարվում էր ամենուրեք, հին եկեղեցում: Հաղորդվողներն իրենց աջ ափի մեջ, որը խաչաձև հեկվում է ձախ ափի վրա, ստանում են Տիրոջ Մարմինը, որով հաղորդվում են: Ապա յուրաքանչյուրին տրվում է ս. սկիհը, որպեսզի նրանից ըմպեն: Երեխաներին, սակայն, Տիրոջ մարմինը տրվում է սուրբ Արյան մեջ թաթախված: Հավատացյալների հաղորդության ընթացքում պատարագիչն ասում է. «Մարմին (Արյուն) Տեսուն մերոյ»:

Ասորա-հակոբիկյանների պատարագում ս. Սեղանին ապասարկող հոգևորականները հաղորդվում են՝ ս. սկիհից գոլով վերցնելով մի մասնիկ Տիրոջ մարմնից, Նրա Արյան մի քանի կաթիլների հետ միասին, իսկ հավատացյալները հաղորդվում են պատարագի կողմից, որը մատուցելով վերցնում է սուրբ Արյան մեջ թաթախված սուրբ Մարմնի մի մասնիկը և այն դնում հավատացյալների շրթներին, այսինքն այնպես, ինչպես այն կատարվում է հայկական ծեսում:

Կաթոլիկների հետ միավորված նեստորականների մոտ սուրբ հաղորդությունը

տրվում է առանձին. նախ սուրբ Մարմնից տրվում է մի փոքր մասնիկ մաղգմալի վրայից վերցված, և ապա ս. սկիհից ըմպում են սուրբ Արյունը:

Դպտիների պատարագում պատարագիչ քահանան հաղորդվողի բերանն է դնում մի փոքրիկ մասնիկ սուրբ Մարմնից, որից հետո գոլով մի քանի կաթիլ՝ սուրբ Արյունից նույն ձևով (Նախկինում ամեն հաղորդվողի սարկավագը տալիս էր սկիհը՝ ըմպելու, ինչպես հին եկեղեցում): Ապա պատարագիչն ասում է. «Սա է ճշմարիտ Մարմինն (Արյունն) Էսմանուէլ Աստուծոյ մերոյ. Ամեն»: Այն պարագային, երբ հաղորդվողները շատ են, սրբագործված մասնիկները դրվում են սկիհի մեջ, որից հետո հաղորդությունը տրվում է գոլով, ինչպես անում են բյուզանդական ծեսում: Երբ հաղորդվողները ծծկեր երեխաներ են, կատարվում է «շրթնային» հաղորդություն: Պատարագիչն աջ ցուցամատը մոցնում է սկիհի մեջ և ապա տալիս երեխային, որ այն ծծի:

Հաբեշական պատարագում պատարագիչն ամեն մեկ հաղորդվողին մատուցում է սրբագործված Մարմնից մի փոքր մասնիկ՝ ասելով. «Հացն կենաց, որ իջեալ լերկնից, Մարմինն Քրիստոսի»: Հաղորդվող հավատացյալը պատասխանում է. «Ամեն»: Ապա սարկավագը գոլով մի քանի կաթիլ է վերցնում սուրբ Արյունից և դնում հավատացյալի բերանը՝ ասելով. «Սա է քաժակն կենաց, որ իջեալ լերկնից. սա է Արիւնն Քրիստոսի», և հավատացյալը պատասխանում է. «Ամեն և միշտ ամեն»:

Հիշյալ բոլոր պատարագներում սուրբ հաղորդությունից հետո ասվում են գոհաբանական քարոզներ և աղոթքներ:

9. —Ինչ վերաբերում է պատարագի ավարտին, արևելյան հին եկեղեցիների պատարագներից և ոչ մեկում չենք հանդիպում հայկական ծեսի այն սովորությանը, ըստ որի Ավետարանից մի հատված է ընթերցվում, նախքան հավատացյալների՝ եկեղեցուց մեկնելուց առաջ տրվող օրհնությունը: Նշված բոլոր պատարագներում պատարագիչն օրհնում է ժողովուրդին մի աղոթք արտասանելով, որով հայցում է Աստուծո շնորհքը, որն իջել է պատարագի ներկա հավատացյալների վրա, շնորհք, որ նրանց հետ լինի կյանքի ամբողջ ընթացքում և նրանց պահի ու պահպանի ամենայն չարիքից, նրանց անքիժ և հաճելի ներկայացնի Աստուծո առաջ, Վերջին դատաստանի մեծ օրը: Այս աղոթքը հավասարազոր է բյուզանդական ծեսի «Որ օրհնես զայնուսիկ» աղոթքին:

10. —Հավատացյալների՝ եկեղեցուց

դուրս գալու պահին պատարագիչը դռան մոտ նրանց բաժանում է «մաս» (այն նըշխարից, որ պատրաստվում է ա. Խորհրդի նշխարի հետ), ասելով միաժամանակ մի աղոթք: Այս կանոնից կարծես թե բացառություն է կազմում միայն հաբեշական պատարագը:

11. —Ս. պատարագի ավարտից հետո արևելյան բոլոր հին եկեղեցիների պատարագներում սկիհում մնացած ա. նշխարի մասնիկները ճաշակում են պատարագին սպասարկող հոգևորականները: Ապա սուրբ սպասքը լվացվում է և դրվում իր տեղը: Ս. Սեդանին սպասարկողները լվանում են իրենց ձեռքերը մի քանի կարճ աղոթք արտասանելով:

Վերը նշվածից երևում է, որ հայկական և մյուս արևելյան պատարագների միջև (ոչ քաղկեդոնական) կան բազմաթիվ նմանություններ և ընդհանուր կետեր, բայց և կան

բազում տարբերություններ, ինչպես հայ և բյուզանդական պատարագների միջև, որոնք բոլորովին էլ չեն ազդում քրիստոնեական պատարագի ընդհանուր հիմքի վրա: Ընդհանուր այս հիմքը, որի ուղղափառությունն անտարակուսելի և հաստատուն է, հանդիսանում է արևելյան բոլոր եկեղեցիների ընդհանրապես ամենամեծ քարիքը, միակը, որն ի վիճակի է հավատելու սկզբնական շրջանի քրիստոնեական եկեղեցիների միասնական հին հավատքը և միաժամանակ Աստուծո հոգատարությունն իր եկեղեցու հանդեպ, ինչպես նաև այն միակ չափանիշը, որը կարող է հիմք հանդիսանալ եկեղեցիների միջև մերձեցման և միության ի նպաստ կատարվող փորձերի:

ԶԱՐԵՀ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ՊԱՐՈՆՅԱՆ

Բուխարեստ

